Կարգապահական գործ թիվ ԿԳ-15086

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 216-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/134-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Բաղդասարյանին (արտոնագիր թիվ 1393) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 18.07.2015թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Արմեն Բաղդասարյանն ունի 10.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիս և հունիս ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

20.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 210-Ա/ԿԳ-15086 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արմեն Բաղդասարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

21.07.2015թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հոմկեմբերի 6-ին, ժամը՝ 19:21-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողի կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Վարույթին կցված են ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2015թ. և 06.10.2015թ. տրամադրված տեղեկանքներն, առ այն, որ փաստաբան Արմեն Բաղդասարյանն ընդհանուր առմամբ ունի 95.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն, որը չի վճարել:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պատասխանողի նկատմամբ նույնանման խախտում կատարելու փաստերով նախկինում հարուցվել են չորս կարգապահական վարույթներ, որոնցից առաջինը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով, իսկ մյուս երեքի արդյունքում փաստաբանը ենթարկվել է պատասխանատվության՝ 16.01.2015թ. նկատողության, 15.04.20158թ. խիստ նկատողության, 28.09.2015թ. տուգանքի ձևով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Բաղդասարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհուրդը կրկին հիշեցնում է, որ անդամավճարը հանդիսանում է Պալատի ընդհանուր պահանջմունքների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար անհրաժեշտ միջոց, առանց որի Պալատը չի կարող արդյունավետ կազմակերպել իր աշխատանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի համաձայն. «Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար”, 19 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճար:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար, իսկ Պալատի Կանոնադրության 4.4.կետի համաձայն՝ Յուրաքանչյուր ամսվա անդամավճարի մուծումը կատարվում է դրան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Վերը նշված իրավանորմերի համաձայն՝ անդամավճարի մուծման ուշացումը հանդիսանում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17, 19 հոդվածների, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի և Պալատի կանոնադրության 4.4 կետի պահանջների խախտում:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս, Պալատի խորհուրդը հաշվի է առնում այն հանգամանքը, որ՝ փաստաբան Արմեն Բաղդասարյանը (արտոնագիր

թիվ 1393) նախկինում նմանատիպ խախտումների համար ենթարկվել է կարգապահական տույժերի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Արմեն Բաղդասարյանին (արտոնագիր թիվ 1393) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Արմեն Բաղդասարյանի (արտոնագիր թիվ 1393) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 15.000 դրամ:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արմեն Բաղդասարյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող **Լուսինե Սահակյան**